

առաջն առնելու միջոցներ՝ մատնանիշ եղան, որ հարկաւոր է աշխարհականներին առաւել մեծ չափով մասնակից անել եկեղեցական գործերին՝ վերականգնելով նրանց իրաւունքը. որ հարկաւոր է ժամանակակից դարձնել քարոզը, հարկաւոր է պահպանել եկեղեցական կարգերը, վերականգնել հին անցեալի եկեղեցական կեանքը և կիւրակէն սուրբ պահել:

Եկեղեցեաց միացման խնդրի մասին կարգացուեց նոր-վիդի դէկան Լէֆրոյի դատախօսութիւնը: Իրեն հիմք ընդունելով անդլիական և ամերիկական եպիսկոպոսների մշակած չորս պայմանները (ձանաշել բարձրագոյն հեղինակութիւն և բաւարարութիւն Սուրբ գրքի, հաւատոյ առաքելական և ծիսական հանգանակները, Փրկչից սահմանուած երկու խորհուրդները և պատմական եպիսկոպոսականութիւնը) հեղինակը համեմատում է կաթոլիկ և յոյն եկեղեցիները և գտնում, որ առաջինն ըստ ամենայնի, իսկ երկրորդը շատ բաներում անհամապատասխան են վերոյիշեալ պահանջներին: Յունական եկեղեցին Սուրբ գրքը մեկնելիս պարտադիր է համարում աւանդութիւնը և նրան սուրբ գրքի չափ հեղինակաւոր նշանակութիւն է տալիս. իւր վարդապետութեան և խորհուրդների վերաբերութեամբ համաձայնութեան յոյս չի տալիս, չի ընդունում անդլիական երար-խիայի՝ նուիրապետութեան իսկութիւնը: Միութեան աւելի մեծ յոյս են տալիս Նոնկոնֆորմիստ (անդլիական պետական եկեղեցի չընդունող) համայնքները և 293 այգպիսի համայնքները՝ գլխաւորապէս մէթոդիստները. (անդլիական աղանդ է, որը ծնունդ առաւ 1727 թուին և որի նպատակն է աւետարանական բոլոր պահանջների պահպանութիւնը): Դատախօսը գտաւ, որ վերջիններս կը միանան ամենազիւրին կերպով և որ նրանց քահանաներին կարելի է ընդունել առանց նոր ձեռնադրութեան:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այս տարի հոկտեմբերին Սախսնիայի Գրէզդէն քաղաքում տեղի ունեցաւ Աւետարանական միութեան XXVII համաժողովը: Կաթոլիկութեան դէմ մաքառող այդ միութեան համաժողովին առիթ տուաւ պապականութեան հետցհետէ աճող քաղաքական նշանակութիւնը Գերմանիայում: Վերջին ժամանակներս միութեան անդամների թիւն աճել է 66 հազարով և հասել 250 հազարի: Համաժողովին կարգացուած ղեկուցում-

ների մեծագոյն մասը գլխաւորապէս վերաբերում էր աւետարանական սկզբունքների պարզաբանութեան և թէ նրանց որքան հակառակ է կաթոլիկութիւնը: Ուսուցչապետ Կիրնը խօսելով «Աւետարանական եկեղեցւոյ» կոչման և ոյժի մասին, պարզաբանեց աւետարանական եկեղեցւոյ հատկացողութիւնը, որը տարբեր է կաթոլիկութեան: Բէալինգը պաշտպանեց գերմանական իրաւունքը հակառակ պապական—հռովմէականի. Տրաֆալգաուզէն համեմատեց աւետարանական և պապական դաստիարակութեան սիւստեմները (եղանակները). ուսուցչապետ Չակվերտը տուաւ Լիւտերի աւետարանական պատկերը և հակադրեց այն կաթոլիկ Ռէնիլիին և այլն: Ընդհանուր առմամբ պահպանողական մամուլը գոհունակութեամբ շեշտում է միութեան աշխատութիւնների մէջ այս տարուայ դրական բովանդակութիւնը, որ առաջներում արտայայտուում էր միմիայն բողոքներով և մերժումներով: Գործնական տեսակէտից առանձին նշանակութիւն ունէր միութեան գործունէութեան եղանակի վիճելի խնդիրը—թէ որդեօք նա պէտք է սահմանափակուի միմիայն աւետարանական ներգործութեան շրջանակում, թէ՛ կարող է գործ գնել և քաղաքական միջոցներ: Առանձին դասախօսութեան մէջ, որի վերնագիրն էր «Աւետարանական միութիւնը քաղաքական խնդիրներ ունի», թէ ոչ. Բերվինկելը մեկնում էր այդ խնդիրն այն մարով, որ աւետ. միութիւնը քաղաքական միութիւն չէ, բայց նա նպատակ ունի կրթելու իւր անդամներին նաև քաղաքական կեանքի համար. պաշտպանելու գերմանական ազգի և աւետ. եկեղեցու շահերը և քաղաքական հողի վրայ. ուրիշ խօսքով—միութիւնը չի կարող քաղաքականութեամբ զբաղուել, բայց նրա անդամներից իւրաքանչիւրը պարտաւոր է զբաղուել նրանով: Համաժողովն ընդունեց երկու վճիռ. մէկով շնորհակալութիւն է յայտնում «Գերմանական Աւետարանական եկեղեցական Կոմիտէին» նրա յայտարարութեանց համար, որոնք հանդիսանում են համարձակ վկայութիւն աւետարանական քրիստոնէութեան ճշմարտութեան և յոյս է տածում, որ նա այսուհետև ևս կը ներկայացնի աւետ. եկեղեցու շահերը և կընպատուի եկեղեցիների աւելի մեծ միութեան:

Միւս վճիռը կոչ է անում աւետարանական ժողովրդին «միացեալ ոյժերով համարձակ հանդէս գալ հասարակական կեանքի բոլոր ասպարէզներում», որպէս զի վերջ դուրի գերմանական ժողովրդի մէջ մնացած և փոքրամասնութիւն կազմող կաթոլիկութեան՝ բողոքականութեան հայրենիքում:

— Մի վրոքը էլ որ առաջ գնան և սեփեղանան, յոյս կայ, որ գերմանական եսականութիւնը մի նոր ինկվիզիցիա կը ստեղծի յանուն աւետարանականութեան. գոնէ այս ընթացքը պարզապէս այդ է ասում իւրաքանչիւր բանիւրուն ընթերցողին:



ԻՆՉՊԷՍ ՊԵՏԲ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ. *)

Դասական հնութեան ժամանակից մեզ հասած մի յայտնի անեղգոտ ասում է, մի անգամ մի աթենացի ճառախօս գալիս է Սպարտա և ազդարարում, թէ մի գովասանական ճառ պիտի արտասանէ Հերակլէսի վրայ: Այն ժամանակ մի խոհուն և սահաւիսօս լակոնացի նորան ուղղում է հետեւեալ շիտթեցուցիչ հարցը. «Մի՞թէ որևէ մէկը նորան պարտուել է»: Յաւօք որտի սպանելի չէ, որ մէկն էլ դառնայ ու իմ ընտրած խնդրի մասին մի նման տռարկութեամբ ինձ հարցնէ. «Սակայն մի՞թէ մէկն ու մէկը յարձակումն է գործել քրիստոնէութեան վրայ»: Բայց հաւանական է, որ ոմանք ասեն. «Այդ խնդիրն ինձ չի՛ վերաբերում» եւ ո՛չ պատկանում եմ այն մարդկանց շարքին, որոնց դէմ քրիստոնէութիւնը պէտք է պաշտպանել: զի ես նորան ի բոլոր սրտէ յարգում եմ, ո՛չ էլ նոցանից եմ, որոնց գործն է նորան պաշտպանելը, քանի որ ես աստուածաբան չեմ»:

Բայց և այնպէս իմ կարծիքով ամեն մի քրիստոնէի համար լաւ է, որ նա երբեմնակի կշռադատէ, թէ ի՞նչ ձևով պէտք է պաշտպանել քրիստոնէութիւնը յատկապէս մեր օրերում:

Մենք զգում ենք, որ հէնց մեզանից ամեն մէկի մէջ մի բան կայ թագնուած, որի դէմ միշտ ևս նորէն առաջ պիտի մղել քրիստոնէութեան պաշտպանութիւնը, մենք զգում ենք՝ լինում է ըսպէ, երբ մենք՝ թէպէտ և սրտով քրիստոնեայ, մըտքով հեթանոս ենք, այո՛, երբեմն էլ նոյն խի սրտով լաւ քրիստոնեայ չենք:

Սակայն մենք գիտակից ենք նաև, որ քրիստոնէութեան պաշտպանութիւնը պէտք չէ՛ թողնել միմիայն հոգևորականնե-

*) *Paul Mehlhorn*, Wie ist in unserer Zeit das Christentum zu verteidigen? 2 Aufl. Berlin, 1894, գրքոյկից: